**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/27** - SF-46

ք. Երևան «09» 07 2018թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարին փոխարինող Գ.Ավագյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **850 000(Ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է քսանչորս էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական N 3 շենք | ք.Երևան Ն. Տիգրանյան 1 փակուղի 1 |
| ՀՀ Ֆինանսների Նախարարության | Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան |
| աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 2170021216300001 |
| Հ/Հ 900011018737 | ՀՎՀՀ 00131374 |
| ՀՎՀՀ 02508046 | Տնօրեն՝ |
| Աշխատակազմի ղեկավարին փոխարինող՝ | |
| ------------------------------ Գ.Ավագյան | ------------------------------ Ա.Հովսեփյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*« 09 » 07 2018թ. կնքված*
*ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/27-ՏՖ-46 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը |
| 1 | 50111130/2 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /4x4 տիպի ավտոմեքենա (Շեվրոլե Նիվա)/ | դրամ | 100000 | 1 | ք.Երևան ՀՀ Կառավարական 3-րդ շենք | 20.12.2018թ |
| 2 | 50111130/3 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /5-տեղանոց մարդատար ավտոմեքենա/ առջևի տանող ա/մ /Տոյոտա Կորոլլա 1.6/ | դրամ | 100000 | 1 | | |
| 3 | 50111130/4 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ /Տոյոտա Կորոլլա 1.6/ | դրամ | 100000 | 1 | | |
| 4 | 50111130/5 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ 4x4 տիպի ավտոմեքենա / Նիսսան - Իքս-Տռաիլ/ | դրամ | 100000 | 1 | | |
| 5 | 50111130/6 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ 4x4 տիպի ավտոմեքենա / Նիսսան - Իքս-Տերրայ/ | դրամ | 100000 | 1 | | |
| 6 | 50111130/7 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /4x4 տիպի ավտոմեքենա, Ռենո Դուստեր/ | դրամ | 100000 | 1 | | |
| 7 | 50111130/8 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /5-տեղանոց մարդատար ա/մ /Ինֆինիտի Մ 35/ | դրամ | 100000 | 1 | | |
| 8 | 50111130/9 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /4x4 տիպի ավտոմեքենա /Տոյոտա Լանդ Կրույզեր/ | դրամ | 150000 | 1 | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ Ֆինանսների Նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018737
ՀՎՀՀ 02508046
Աշխատակազմի ղեկավարին փոխարինող՝
_______________ Գ.Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ
ք.Երևան Ն. Տիգրանյան 1 փակուղի 1
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան
Հ/Հ 217002121630001
ՀՎՀՀ 00131374
Տնօրեն
_______________ Ա.Հովնանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված № 1,1
« 09 » 07 2018թ. կնքված
ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/27-Տ[?]-46 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1(տեխնիկական զննման /դիագնոստիկա/) , SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

| | | Երևան քաղաքում | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների | | | | | | | |
| | | 1 չափաբաժին | 2 չափաբաժին | 3 չափաբաժին | 4 չափաբաժին | 5 չափաբաժին | 6 չափաբաժին | 7 չափաբաժին | 8 չափաբաժին |
| | | 4x4 տիպի ավտոմեքենաներ (Շեվրոլե Նիվա) | 5-տեղանոց մարդատար ավտոմեքենա/ առջևի տանող ա/մ /Տոյոտա Կորոլլա 1.6/ | 5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ /Տոյոտա Կորոլլա 1.6/ | 4x4 տիպի ավտոմեքենա / Նիսսան - Իքս-Տռաիլ/ | 4x4 տիպի ավտոմեքենա / Նիսսան - Իքս-Տերրալ/ | 4x4 տիպի ավտոմեքենա, Ռենո Դուստեր | 5-տեղանոց մարդատար ա/մ /Ինֆինիտի Մ 35 / | 4x4 տիպի ավտոմեքենաներ /Տոյոտա Լանդ Կրույզեր/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | *SU-1 Ներառվող ծառայությունների անվանում* | ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ | Այլ պետությունների արտադրության մեքենաներ | | | | | | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 4200 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Արտացման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 7 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 8 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 9 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 10 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 4200 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 12 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | ABS համակարգի ստուգում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 14 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 15 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 16 | Թափքի վիճակի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 17 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | ***ՏՍ-2 ներառվող ծառայությունների անվանում*** | | | | | | | | |
| 18 | Շարժիչի հանում և տեղադրում | 24000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 19 | Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 20 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 21 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 22 | Շարժիչի վերանորոգում | 48000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 23 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 24 | Նույնը V6-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 25 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 3000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 26 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 3600 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 27 | Նույնը աջի համար (V6) | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 28 | Նույնը ձախի համար (V6) | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 29 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 15000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 |
| 30 | Նույնը աջի համար (V6) | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 31 | Նույնը ձախի համար (V6) | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 32 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 33 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 34 | Փականի խցուկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 35 | Նույնը V6-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 36 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 37 | Նույնը V6-ի ձախի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 38 | Նույնը V6-ի աջի դեպքում | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 39 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 40 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 41 | Չռիչների փոխարինում SOHC | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 42 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 43 | Ատամնավոր փոկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 30000 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 44 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 45 | Նույնը V6-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 46 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 47 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 48 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 49 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 50 | Նույնը V6-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 51 | Նույնը կոնդիցիոների դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 52 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 53 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 54 | Միջնային օղակների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 55 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 56 | Նույնը V6-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 57 | Թափանիվի հանում և տեղադրում | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | | | | | |
| 58 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1800 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 59 | Յուղի պոմպի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 60 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 61 | Նույնը V6-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 62 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 3600 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 |
| 63 | Բռնկման կարգավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 64 | CO կարգավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 65 | Խարնարակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 66 | Խարնարակի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 67 | Օդի զտիչի փոխարինում | 1800 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 68 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 |
| 69 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 |
| 70 | Բենզամղիչի փոխարինում | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 71 | Վառելիքի զտիչի փոխարինում | 1800 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 72 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | 90 | 90 | 90 | 90 | 90 | 90 | 90 | 90 |
| 73 | Տրամբլյորի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 74 | Տրամբլյորի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | | | | |
| 75 | Ջովհարի փոկի հանում և տեղադրում | 3600 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 76 | Ջովհարի հանում և տեղադրում | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |
| 77 | Ռադիատորի հանում և տեղադրում | 6000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 78 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 79 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 80 | Ռադիատորի վերանորոգում | 0 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 81 | Թերմոստատի փոխարինում | 3000 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 |
| 82 | Ջրի պոմպի փոխարինում | 6000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 83 | Նույնը DOHC և V-6 դեպքում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 84 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 85 | Ջրի պոմպի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 86 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 87 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 88 | Ընդարձակող բաքի փոխարինում | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 89 | Խլարարի հանում և տեղադրում | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 90 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 91 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 2400 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | | | | | |
| 92 | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում | 2400 | 0 | 0 | 0 | 0 | 2400 | 0 | 0 |
| 93 | Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում | 10 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 94 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 1200 | 0 | 0 | 0 | 0 | 1200 | 0 | 0 |
| 95 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | 600 | 0 | 0 | 0 | 0 | 600 | 0 | 0 |
| 96 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 97 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 18000 | 0 | 0 | 0 | 0 | 42000 | 0 | 0 |
| 98 | ՓՏ-ի վերանորոգում | 12000 | 0 | 0 | 0 | 0 | 42000 | 0 | 0 |
| 99 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 100 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 101 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 102 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 103 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 104 | Նույնը V6-ի համար | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 105 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | [redacted] | 60000 | 60000 | 60000 | 60000 | 0 | 60000 | 60000 |
| 106 | Նույնը V6-ի համար | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 107 | ԱՓՏ-ի վերանորոգում | [redacted] | 120000 | 120000 | 90000 | 90000 | 0 | 90000 | 90000 |
| 108 | Նույնը V6-ի համար | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 109 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | [redacted] | 12000 | 12000 | 12000 | 12000 | 0 | 12000 | 12000 |
| | **5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | | | | | | | |
| 110 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 111 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով | [redacted] | 0 | 0 | 42000 | 42000 | 42000 | 0 | 42000 |
| 112 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | [redacted] | 0 | 0 | 4800 | 4800 | 4800 | 0 | 4800 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 113 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | 1800 | 0 | 0 | 6000 | 6000 | 6000 | 0 | 6000 |
| 114 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ. | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 115 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | 2400 | 0 | 0 | 4800 | 4800 | 4800 | 0 | 4800 |
| 116 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | 6. Առջևի և հետևի կամրջակներ | | | | | | | | |
| 117 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | 2400 | 0 | 0 | 2400 | 2400 | 2400 | 0 | 2400 |
| 118 | Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 119 | Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում | 15000 | 0 | 0 | 15000 | 15000 | 15000 | 0 | 15000 |
| 120 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | 2400 | 0 | 0 | 6000 | 6000 | 6000 | 0 | 6000 |
| 121 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | 1200 | 0 | 0 | 4200 | 4200 | 4200 | 0 | 4200 |
| | 7. Կախոց | | | | | | | | |
| 122 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 123 | Տրավերսի հանում և տեղադրում | 9000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 |
| 124 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում | [redacted] | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 |
| 125 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 3600 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 |
| 126 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 127 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 128 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 129 | Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 130 | Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 131 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 0 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 132 | Զսպանակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 133 | Զսպակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 134 | Զսպակի վռանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 6000 | 0 | 0 | 0 |
| 135 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 1800 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 136 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 3600 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 |
| 137 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 138 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 2400 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 |
| 139 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 2400 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 140 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 1800 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 141 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 2400 | 0 | 0 | 4200 | 4200 | 4200 | 0 | 4200 |
| 142 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 600 | 0 | 0 | 1200 | 1200 | 1200 | 0 | 1200 |
| 143 | Գնդե հոդակապերի փոխարինում | 1800 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 144 | Ծայրակալների հանում և տեղադրում | 1200 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 145 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 146 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 1500 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 147 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 148 | Հետևի զսպանակի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 149 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 1800 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 150 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 151 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 1500 | 0 | 0 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 |
| 152 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 153 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 154 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | [redacted] | 3000 | 3000 | 0 | 0 | 0 | 3000 | 0 |
| 155 | Անվաբացքի կարգավորում | 9600 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 | 7200 |
| 156 | Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | | | | | | | | |
| 157 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 9600 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 |
| 158 | Նույնը V6-ի համար | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 159 | Ղեկային կալունի վերանորոգում | 9600 | 45000 | 45000 | 42000 | 42000 | 42000 | 45000 | 42000 |
| 160 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 161 | ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 162 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | 3000 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 163 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 164 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 165 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 166 | Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում | 3000 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 167 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 168 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 169 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 170 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **9. Արգելակային համակարգ** | | | | | | | | |
| 171 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | 0 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 172 | Գլխ. գլանի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 173 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | 9000 | 9000 | 9000 | 1000 | 1000 | 1000 | 9000 | 1000 |
| 174 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 175 | Բանվ. գլանի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 176 | Արգելակային համակարգի օդահանում | 2400 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 177 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 178 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 179 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 180 | Յետևի սուպպորտի վերանորոգում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 181 | Արգելակային փողրակի փոխարինում | 2400 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 182 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 2400 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 |
| 183 | Յետևի սկավառակային կոճղակների փոխարինում | [redacted] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 184 | Յետևի կոճղակների փոխարինում | 3600 | 4800 | 4800 | 6000 | 6000 | 6000 | 4800 | 4800 |
| 185 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 2400 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 |
